ՀԱՐԳԵԼԻ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐ,

2024թ. հոկտեմբերի 1-ից կմեկնարկեն ասպիրանտների և հայցորդների համար նախատեսված դասընթացները, որոնց մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես *գրանցվել*:

Գրանցվելուց առաջ խնդրում ենք հանգամանալից ծանոթանալ ***ներքոնշյալ պահանջներին կամ ցուցումներին և խստագույնս հետևել դրանց:***

- Դասընթացներին մասնակցելու համար պետք է գրանցվել մինչև սույն թվականի ***սեպտեմբերի 27-ը ներառյալ***: Նշված ժամկետում չգրանցվելու դեպքում կզրկվեք այս կիսամյակի համապատասխան դասընթացին/ներին մասնակցելու հնարավորությունից:

- 2024թ. սեպտեմբերին հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա կամ հայցորդության դիմածները ***հրամանագրվելուց հետո՝ մինչև դասերի մեկնարկը, պետք է դիմեն*** ԵՊՀ դոկտորական կրթության կենտրոն՝ ***գրանցվելու համար***:

- Գրանցվելուց առաջ **անհրաժեշտ է մանրամասն ծանոթանալ դասընթացների ժամանակացույցին** և ***այդուհետ կատարել ընտրությունը***:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՐԱՆՑՎԵՔ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ/ՆԵՐԻՆ, որոնց վստահաբար ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՔ:** ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ ԸՆՏՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ:

- **Գործող ասպիրանտներն ու հայցորդները** գրանցվելիս ***ՊԵՏՔ Է ՆՇԵՆ ԱՅՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆ, որն իրենց տրամադրել է ԵՊՀ Դոկտորական կրթության կենտրոնը***:

- ***ՉԻ՛ԿԱՐԵԼԻ գրանցվել այն դասընթացներին***, որոնց ***ՆԱԽԿԻՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՔ ԵՎ ՍՏԱՑԵԼ ՍՏՈՒԳԱՐՔԸ***: Նման դեպքերում հավելյալ կրեդիտ չեք կուտակելու:

- ***ՉԻ՛ԿԱՐԵԼԻ մի քանի անգամ գրանցվել նույն դասընթացին:***

- ***Հումանիտար մասնագիտություններ ներկայացնող ասպիրանտներն ու հայցորդներն անգլերեն լեզվի դասընթացն ընտրելիս և գրանցվելիս ՉՊԵՏՔ Է ԸՆՏՐԵՆ բնագիտական մասնագիտություններով ասպիրանտներին կամ հայցորդներին դասավանդող դասախոսների և հակառակը***:
- Գրանցումն իրականացվելու է առցանց եղանակով: Յուրաքանչյուր դասընթացին գրանցվելու համար պետք է անցնել հենց այդ դասընթացի համար ստեղծված հղմամբ և լրացնել պահանջվող տվյալները:

Առցանց դասընթացներն անցկացվելու են www.e-learning.ysu.am հարթակում:

Հետազոտողի պատրաստման կրթական ծրագրով նախատեսված է, որ Ձեր ***ողջ ուսումնառության ընթացքում դասընթացների մասով*** պետք է կուտակել ***առնվազն 32 կրեդիտ***, որից ***12-ը պարտադիր դասընթացներից***, իսկ 20-ը՝ ***ընտրովի***:

Պարտադիր դասընթացները երեքն են՝

1. «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» - 4 կրեդիտ
2. «Անգլերեն լեզու» - 4 կրեդիտ
3. «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» - 4 կրեդիտ

ՀԻՇԵՑՆԵՆՔ նաև, որ պարտադիր համարվում են այն դասընթացները, որոնց դուք չեք կարող չմասնակցել Ձեր ուսումնառության ընթացքում: Այդ դասընթացները նախընտրելի է ընտրել ուսումնառության առաջին տարվա ընթացքում: Ինչ վերաբերում է մյուս դասընթացներին, ապա դրանք ընտրովի են և ունեն տարբեր կրեդիտատարություն:

Ստորև ներկայացված են պարտադիր և ընտրովի դասընթացներին գրանցվելու հղումները:

ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1. **Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ – Ա. Ավագյան**
https://forms.gle/iHcvFbNYSxNJCPSF8
2. **Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն – Հ. Վերմիշյան**
https://forms.gle/uNPAgBD5Tdu3jcwa9
3. **Անգլերեն լեզու (բնագիտական մասնագիտությունների համար) – Ե. Երզնկյան**
https://forms.gle/Tf64nceiKS9YYaYP8
4. **Անգլերեն լեզու (բնագիտական մասնագիտությունների համար) – Զ. Վարդապետյան**
https://forms.gle/m2gJa8WTSceFXJzu5
5. **Անգլերեն լեզու (հումանիտար մասնագիտությունների համար) - Խումբ 1**
https://forms.gle/gsHYh7MyMZtoBdhS7
6. **Անգլերեն լեզու (հումանիտար մասնագիտությունների համար) - Խումբ 2**
https://forms.gle/XdRRZHaV3JmhHMK16

ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

7. **Գիտության փիլիսոփայություն – Գ. Սողոմոնյան**
https://forms.gle/rcY9kUhJZFoAez8T8
8. **Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն –Ա. Ավանեսյան**
https://forms.gle/KFZ3GQeHxnddAH5K6
9. **Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում – Ա. Մաքսուդյան**
https://forms.gle/B4aLaoFNUVCgTEoJ6

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել ԵՊՀ պաշտոնական կայք (www.ysu.am) կամ դիմել ԵՊՀ դոկտորական կրթության կենտրոն (Ա. Մանուկյան 1, հեռ.՝ (060) 710 – 188, (010) 555 - 531):